

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԶԵՎՈԿ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ  
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.01.01-22

ք. Երևան

«30»\_01\_2018թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրեն Ա. Բլեյանի, որը գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՈՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» ծրագրի շրջանակներում Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի միջին տարեկան 20 սովորողների համար հաշվարկված (առանց ընդունելության), ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցման պարտավորությունները ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի 09.03.01.01 ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում:

**2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

- 2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է մինչև 2852000 (երկու միլիոն ութ հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ:
- 2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
- 2.3 Պատվիրատուին իրավունք է վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել ավելացնել կամ նվազեցնել:

**3 ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՍԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

- 3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:
- 3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:
- 3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

**4 ԱՅԼ ԴՐՈՒՅՑՆԵՐ**

- 4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
- 4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:
- 4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Պ ա տ վ ի Ր Ա Մ Ո Ւ  
ՀՀ կրթության և գիտության նախարարություն  
ք. Երևան, Վ. Սարգսյան 3  
Երևանի թիվ 1 գանձապետարան  
Հ/Հ 900011005460  
Նախարարության աշխատակազմի  
ղեկավար----- Ն. Հարությունյան  
(ստորագրություն)

Կ ա տ ա Ր Ո Ղ  
«Երևանի «Մխիթար Սեբաստացի»  
կրթահամալիր» ՊՈԱԿ  
ք. Երևան, Ա. Բաբաջանյանի 25  
Հայկկոնոմբանկ Սետաքս մասնաձյուղ  
Հ/Հ 163218137665  
տնօրեն----- Ա. Բլեյան  
(ստորագրություն)

